№ 89 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 27 1901 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 27 № 89

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Ազգեցութիւնների ծաւալը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Արձագանքներ. Անբերրիութիւնից վնասվածների օգտին. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Յովսէփ կաթողիկոս Արղութեան.

ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԾԱՒԱԼԸ

—

Մեր երկրի գործարանական արդիւնագործութեան ամենախոշոր առարկայի, այն է նաւթի գների յանկարծակի անկումը սարսափի մէջ գցեց ոչ միայն նաւթագործներին, այլ և այն բոլոր անձանց, որոնք իրանց առևտրական և արդիւնագործական յարաբերութիւններով կապ ունեն նաւթային գործի հետ: Այդպէս, օրինակ, շատ ծանր և անօգնական վիճակի մէջ զգացին իրանց երկաթավագոնները, որոնց համար նաւթային շրջանը մի անսպառ շուկայ էր առևտրի համար: Դժուար դրութեան մէջ ընկան կերօսինի գործարաններին քիմիական նիւթ մատակարարողները: Աշխատանքից զրկվեցին բանուորներ, գործակատարներ, արհեստաւորներ:

Նաւթի գինը ընկաւ այնքան, որ նաւթի արդիւնաբերութիւնը դարձաւ ոչ միայն անշահաւէտ, այլ և վնասաբեր, մանաւանդ այն հողերում, որոնք վերցված են պետութիւնից որոշ պայմաններով: Նաւթային առևտուրը կանգ առաւ և առաջ բերեց մի շարք սնանկութիւններ և դրամական դժուարութիւններ: Բանկերը հրաժարվեցին մուրհակներ վերցնել նախկին չափով և սկսեցին գործ դնել մուրհակների վերաբերութեամբ մեծ զգուշութիւններ: Բանկերից մէկը, այն է Փոխադարձ Կրեդիտի Ընկերութիւնը, համաձայնութիւն յայտնեց մուրհակները վերանորոգել այն պայմանով, որ վճարվի նրանց արժէքի 20%-ը կանխիկ կերպով և այդպիսով յետաձգվի մուրհակների վերջնական հատուցումների ժամանակամիջոցը:

Պէտք է նկատենք, որ վերջին օրերս նաւթային գների անկումը կանգ առաւ: Պետերբուրգի բօրսայում Նոբելեան և Մանթաշեան ընկերութիւնների նաւթային բաժնեթղթերը նոյն իսկ փոքր ինչ բարձր գնով վաճառվեցին: Բայց արտաքին ուրիշ պայմանների մէջ դեռ նպաստաւոր բարեփոխութիւններ տեղի չեն ունեցել այնքան զգալի կերպով, որ կարելի լինէր հանգստութեամբ նայել առաջիկայի վրա: Մօսկվայի, Լօձի և Վարշավայի գործարանական շրջանները կենդանութիւն չեն ցոյց տալիս, վառելիքի մեծ պահանջներ չեն յայտնվում ոչ ներքին, ոչ արտաքին շուկաների կողմից: Համաշխարհային նաւատօրմը դեռ չէ մտնում Սև Ծովի ափերին նաւթային ապրանքներ վերցնելու:

Ինչպէս յայտնի է, Անգլիան, մաքս դնելով իր երկրից արտահանվող քարածուխի վրա, փոքր ինչ կը թանգացնէ այդ վառելիքի գինը և կը նպաստէ մի որոշ չափով գների բարձրանալուն ուրիշ տեղերում. բայց ներկայումս դեռ չեն զգացվում անգլիական նոր քաղաքականութեան հետևանքները Ռուսաստանի վաճառականոցներում:

Անկասկած, ինչպէս մի անգամ էլ յայտնել ենք, աջող հունձը կը կարողանար կենդանութիւն մտցնել Ռուսաստանի ընդհանուր արդիւնագործութեան մէջ, զարգացնելով ազգաբնակութեան սպառող ընդունակութիւնը: Սակայն այժմ դեռ վաղաժամ է գուշակել, թէ ինչ տեսակ կը լինի հունձը այս տարի. իսկ ընդհանուր վաճառականոցը գտնվում է ճնշված դրութեան մէջ:

Ցաւալի է մի բան, որ նաւթային շրջանում, ուր այնքան հետաքրքրված են իրանց արդիւնագործութեան վիճակով, շատ թիւր գաղափար ունեն այն ընդհանուր և մասնաւոր ազդեցութիւնների մասին, որոնք պայմանաւորում են նաւթի և նաւթային արդիւնքների գինը: Իւրաքանչիւրը տեսնում է միայն այն, ինչ որ կատարվում է իր շուրջը և անկարող է հասկանալ այն ազդեցութիւնները, որոնք գործում են հեռուից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Բագուի այժմեան ճգնաժամը առիթ է տուել նորից հեծեծանք բարձրացնելու խոշոր արդիւնաբերողների դէմ: Փոքրները ողբում են, իսկ խոշորները հաճութեամբ չփում են իրանց ձեռքերը, կամ աւելի ճիշտ ասած, թաթերը: Սովորական երեւոյթ: Կան, ինչպէս գիտէք, մեր այս աշխարհի վրա խոշոր ու մանր արարածներ. կան առիւծներ, կան եւ նապաստակներ. կան կատուներ եւ կան մկներ: Առանց այս չափերի, առանց խոշորութեան եւ փոքրութեան կեանք չի լինի: Եւ կեանքը այսպիսի օրէնք է դրել. խոշորը պիտի կլանէ մանրին, մանրը պիտի խոշորի ստրուկը լինի եւ եթէ փոքր ի շատէ բանիմաց է, միմիայն միջոց պիտի ունենայ խոշորի դէմ—անկիւններում լուռ ու մունջ լաց լինել: Այս դրութեան մէջ են Բագուի փոքրները ներկայ բօպէին: Ընկել են նաւթի գները, հարիւրաւոր մանր-մանր արդիւնագործողներ խեղդվելու վրա են եւ արտասվում են. ինչպէս սրտառուչ կերպով են արտասվում: Ամբողջ այս դրամական տագնապը խոշորների գործն է. նրանք ուզում են սպանել փոքրներին, որպէս զի հրապարակը միայն իրանց մնայ: Այսպէս են բացատրում ներկայ ճգնաժամի պատճառը: Մենք չենք ուզում ասել, թէ դա ճիշտ է եւ ճգնաժամը ուրիշ պատճառներ չունի: Բայց որ խոշորների թաթի ծանրութիւնը այժմ էլ զգացվում է, ինչպէս զգացվել է միշտ—դա էլ անուրանալի է:

Այս երեւոյթի առաջ ենք մենք կանգ առնում: Խոշոր արդիւնաբերողները միշտ իրանց հացին են իւղ քսում, միշտ արհամարհում են անբախտ փոքրերին: Եւ եթէ կամենում էք տեսնել խոշորների տիրապետութեան տեսարանները, մտէք նաւթարդիւնաբերողների ընդհանուր ժողովը, որ տեղի է ունենում տարին մի անգամ: Այդ ժողովը սահմանված է արդիւնաբերողների շահերի համար. բայց որ արդիւնաբերողներին: Միշտ պէտք է նկատի առնել մեծութիւնը: Խոշորները, առիւծները այդտեղ ահագին քանակութեամբ ձայներ ունեն եւ, ի հարկէ, ամեն ինչ իրանց կողմն են քաշում: Իսկ փոքրիկները... Նրանց վիճակված է միայն ականատես լինել մեծերի վեհափառ յաղթութիւններին: Գնում են այդ փոքրերը ժողովի. ճիշտ է, ասված է թէ միութիւնը ոյժ է եւ թոյլ կենդանիները, իրաւ որ, դիմադրում են իրանց կեղեքող մագիլներին ու ճիրաններին այն ժամանակ, երբ միանում են, բայց միանալու համար պէտք է, որ թոյլերը փոքր ի շատէ առաքինութիւն ունենան իրանց փոքրիկ սրտերի մէջ: Բագուի փոքրերը այդ առաքինութիւնից էլ զուրկ են եւ ահա «Тифлис. Лист.» լրագրի աշխատակիցը ասում է նրանց, այդ կեղեքվող նապաստակներին.

Էհ, պարոններ, պարոններ: Ինչ մեղ ունի այդտեղ ցենզը (ձայնի իրաւունքը), եթէ ձեզանում չը կան հասարակական զգացմունքներ, եթէ դուք այնքան վախկոտ էք եւ ճնշված, որ բաւական է պ. Ղուկասովի կամ պ. Ֆէյդլի (Բօռչիլդի ներկայացուցիչ) մի հատ ծուռ հայեացքը եւ դուք լեղապատառ էք լինում: Ես յիշում եմ մի այսպիսի փոքրիկ տեսարան նաւթարդիւնաբերողների վերջին ժողովում: Քննվում է սպիտակ նաւթի գոյնի հարցը: Մանր գործարանատէրերի մի խումբ ջերմապէս եւ եռանդով պաշտպանում է 2½ մարկան: Սարսափելի աղմուկ եւ աղաղակներ: Դէմքերը գրգռված են, աչքերը այրվում են, օդի մէջ բարձրացող ձեռքեր են երեւում: Ահա, ասում եմ ինձ, կը տապալվի նաւթարդիւնաբերողների խորհուրդը:

—Քուէարկել, գաղտնի քուէարկութիւն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐՂՈՒԹԵԱՆ

—

(Շարունակութիւն *)

Ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ, ինչպէս տեսանք, Յովսէփ արքեպիսկոպոսը գտնվում էր Պօտեօմկինի բանակում: Պատերազմական գործերը, այն կողմերում ապրող հայերին պաշտպանելը բոլորովին մոռացնել չը տուին այն գործը, որ արդէն սկսված էր Անդրկովկասում: Արղութեանը, Ռուսաստանի հայ գաղթականութիւնների համար արտօնութիւններ խնդրելով, պատերազմական ժխորի մէջ խօսում էր Պօտեօմկինի հետ եւ այն բազմաչարչար ժողովրդի մասին, որ հեծում էր պարսիկ խաների լուծի տակ: Եւ ահա 1790 թուականի յունվարին նա ներկայացնում է իշխան Պօտեօմկինին մի գրաւոր զեկուցում *), որի մէջ պատմում է, թէ ինչպէս հայերը յարաբերութիւններ սկսեցին Պետրոս Մեծի հետ եւ թէ ինչ յոյսեր էր տուել Պետրոսը հայերին: Զեկուցման կցած էր մի առանձին գրութիւն Ղարաբաղի մէլիքների մասին: Այստեղից մենք իմանում ենք, որ Ղարաբաղի ազատութեան հարցը այդ ժամանակ այսպիսի կերպարանք էր ընդունել. մէլիքները խնդրում էին ոչնչացնել Շուշու խանութիւնը եւ Ղարաբաղի վրա ընդհանուր կառավարիչ նշանակել վրաց թագաւորաղն Դաւթին կամ մի ուրիշին: Իսկ եթէ այդ անկարելի լինի անել, եթէ ռուսաց կառավարութիւնը դիտաւորութիւն չունի ազատել Ղարաբաղը, այդ դէպքում մէլիքները խնդրում էին թոյլ տալ իրանց գաղթել կամ Դերբենտի կողմերը կամ Ռուսաստան:

*) «Մշակ» № 88.

*) „Собраніе актовъ“, հատ. II, եր. 52.

Այստեղ մեր նպատակը չէ քննել, թէ որքան հայ մէլիքները լաւ էին հասկանում իրանց շահերը. անշուշտ Ղարաբաղում, ինչպէս լաւ հասկացել էր Յակոբ Շահամիրեանը, շատ բան տակն ու վրա էր դառնում մէլիքների տգիտութեան պատճառով: Բայց որ հայերի ազատութեան հարցը այսպիսի կերպարանք էր ընդունում, դա արդէն մի ապացոյց էր, որ մէլիքները սպառել էին իրանց ոյժերն ու համբերութիւնը եւ պատրաստ էին նոյն իսկ կորվել իրանց հողից, այսինքն զրկվել այն բոլոր հանգամանքներից, որոնք նրանց անկախութեան միտք եւ իրաւունք էին տալիս: Ճիշտ է. դեռ Պետրոս Մեծի ժամանակ հայերին, իբրեւ փրկութեան միջոց, առաջարկվում էր գաղթել, բայց այդ առաջարկութիւնը չը կատարվեց եւ, երեւի, գլխաւորապէս այն պատճառով, որ գաղթականութեան տեղ ցոյց էր տրվում Կասպից ծովի ափը: Այժմ արդէն խօսք կար Ռուսաստան գաղթելու մասին. այդ խնդրում էին իրանք, հայերը: Նրանց, ի հարկէ, գրաւում էր Ռուսաստանում հաստատված հայ գաղթականութիւնների արտօնված, նախանձելի դրութիւնը. եւ Յովսէփ արքեպիսկոպոսը, որ այդ գաղթականութիւնների ստեղծողն էր, ոչինչ անյարմարութիւն չէր գտնում, որ Ղարաբաղն էլ տեղափոխվի Ռուսաստան: Նրա այդ զեկուցումը Պօտեօմկինը ներկայացրեց Եկատերինա կայսրուհուն:

Բայց, ինչպէս երեւում է, դա հարցի վերջնական լուծումը չէր: Արղութեանի թղթերում մնացած մի ծրագիր ցոյց է տալիս, որ Պօտեօմկինը իր բազմաթիւ նախագծերի թւում ունէր եւ հայոց թագաւորութիւն կազմելու ծրագիրը: Այդ ծրագրի կազմողը Յովսէփ արքեպիսկոպոսն էր. յայտնի է նրա հայերէնը միայն, որ տպագրված է մեզանում մի քանի անգամ *):

*) „Փորձ“ հանդէս, երկրորդ տարի, № 1. „Դիւան հայոց պատմութեան“, գիրք Դ., 1899, եր. 731 և այլն:

Բերում ենք այդ հետաքրքրական զեկուցմանից մի քանի տեղեկութիւններ, ցոյց տալու համար թէ հայերի եւ ռուսների քաղաքական յարաբերութիւնների մէջ գլխաւորապէս ինչ սկզբունքներ էին նկատի առնվում:

Ծրագիրը կոչվում է «Կերպ դաշնադրութեան ի մէջ երկուց ազգաց ռուսաց եւ հայոց», կազմվել է նոյն 1790 թուականներին եւ բաղկացած է 19 յօդուածներից: Ամենից առաջ սահմանվում էր, որ երկու ազգերի մէջ չը լինի կրօնական խտրութիւն: Հայերը հպատակվում են ռուսներին այնպէս, ինչպէս մի ժամանակ հպատակվում էին յոյներին եւ պարսիկներին, այսինքն տալով ռուսներին հարկ եւ պատերազմի ժամանակ օգնութիւն հասցնելով նրանց զօրքով: Հայոց թագաւորի ընտրութիւնը միանգամայն կախված էր ռուսաց կայսրուհու կամքից. այդ թագաւորը կարող է լինել թէ հայ եւ թէ ռուս: Բայց թագաւորը հայադաւան պիտի լինի եւ պիտի օծվի Էջմիածնում: Մայրաքաղաք նշանակվում էր Վաղարշապատը կամ մի այլ քաղաք Արարատեան երկրում: Հայաստանում մնում է ռուսաց մի չափաւոր զօրաբաժին՝ ռուս գեներալի հրամանատարութեան տակ, իսկ հայոց թագաւորի ժառանգներից մէկը պիտի ապրի արքունիքում: Սահմանվում է չքանչան,—Նոյի տապանը, իսկ ժապաւէնները երեք գոյնի—կարմիր, կանաչ եւ կապոյտ, (դրանք Ջրհեղեղից յետոյ եղած ծիածանի գոյներն են). կարելի էր չքանչան հատատել եւ յանուն Գրիգոր Լուսաւորչի: Իսկ թագաւորական կնիքը հետեւեալն էր. Արշակունեաց միաղխանի արծիւը, որ գոյութիւն ունէր նախ քան քրիստոնէութիւնը, քրիստոնէութեան ժամանակ ընդունած դառը եւ Ռուբինեանների երկու արիւծները: Սահմանվում էր, որ Հայաստանի մէջ չը լինի ճորտութիւն, որովհետեւ հայերը երբէք չեն ունեցել ճորտութիւն: Երկու երկիրների մէջ կապվում է առեւտրական դաշինք եւ սահմանվում են մաքսային օրէնքներ: Կաթողիկոսի ընտրութիւնը կատարվում է հայոց թագաւորի առաջարկութեամբ: 19-րդ յօդուածը բերում ենք ամբողջովին, որովհետեւ նա ցոյց է տալիս, թէ Պօտեօմկինը ինչ դիտաւորութիւններ ունէր այս ծրագիրը իրագործելու մէջ. «Որովհետեւ պայծառափայլ կնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պօտեօմկինն է յատուկ խնամակալ ազգի մերում, որ ըստ հաճութեան ամենազորման կայսրուհւոյն է կառավարիչ գործոյս այսմիկ եւ ազգի մերում յատուկ խնամակալ եւ բարերար, զոր ինչ նա անօրինեսցէ... զի չնորհ ողորմութեան մարդասէր կայսրուհւոյն նորին միջնորդութեամբ յառաջանայ ի մեզ, որպէս ատուածութեան ի հրեշտակաց առ մարդիկ»: Կասկած չը կայ, որ Պօտեօմկինը իր համար էր պատրաստում հայոց գահը:

Այսքանը հայերի կողմից: Կայ եւ ռուսների կողմից գրված թղթի թարգմանութիւնը *): Այդտեղ գրուածներին նայելով, Ռուսաստանը ճանաչում էր հայոց երկիրը իբրեւ առանձին թագաւորութիւն, որ դեսպան պիտի ունենայ Պետերբուրգում: Քսան տարի ժամանակով ռուսաց մի զօրաբաժին, բաղկացած 2000 ձիաւոր. 2000 հետեւակ եւ 2000 թնդանօթաձիգ զինուորներից, մնում է Հայաստանում եւ ամբողջ այդ ժամանակ բոլոր բերդերը գտնվում են այդ զօրաբաժնի հրամանատարի իշխանութեան տակ: Հայերը տալիս են այդ զօրքերը պահելու համար տարին 60,000 թուման, կէսը ոսկով եւ արծաթով, իսկ կէսը հացով, մսով եւ գինով: Քսան տարվայ ընթացքում ռուսաց զօրքերը մաս-մաս դուրս են բերվում Հայաստանից, 2000-ը՝ 10 տարուց յետոյ, 2000-ը՝ 15 տարուց եւ 2000-ը՝ 20 տարուց յետոյ. դրա համեմատ էլ պակասեցնվում է հայերի տալիք տուրքը: Իբրեւ հնազանդութեան նշան,

*) «Դիւան հայոց պատմ.», եր. 734.

—Համեցէք, համաձայնվում է նախագահը, բայց միայն թող տասը հոգի յայտնեն, թէ կամենում են գաղտնի քուէարկութիւն։

Ամբոխը հանդարտվեց։ Պ. Ֆէյգլ յաղթական հայեացք է գցում նրա վրա։ Դահլիճում լսվում է չչուկ։ Գործարանատէրերը հրում են միմեանց. գնացէք, ասացէք... Իսկ դուք ինչու չէք գնում։ Ես կը գնամ... Չէ, առաջ դուք գնացէք։ Եւ այլն։ Ի վերջոյ, ոչ ոք չը կամեցաւ պ. Ֆէյգլի աչքի առաջ գաղտնի քուէարկութեան ցանկութիւն յայտնել եւ հարցը ջուրն ընկաւ։

Այժմ տուէք այսպիսի հասարակութեան ինչպիսի ցէնզ կամենում էք։ Պ. Ֆէյգլ բարկացած կը նայէ նրան եւ նա մի վայրկեանում կը լռէ. կուլուս ցանկութիւնը մի ակընթարթում կը կորչի։

Հիմա ինչ անեն այդ փոքրիկ խեղճութիւնները, երբ առիւծների աչքերը չեն գործում, այլ ճիրանները եւ գործում են ոչ թէ հրապարակական ժողովներում, այլ իրանց դրասենեակներում։ Մանր խեղճութիւններին մնում է մի արեւահայեաց, հանդարտիկ անկիւն գտնել եւ այնտեղ լաց լինել ու վայ տալ գլխներին, որքան կամենում են...

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

XLV

«Մշակի» այս համարում անփոփոխ տպվում է Մեսրոպ քահանայ Մելեանի պատասխանը իմ «Արձագանքներին» («Մշակ» № 79)։

Ըստ էութեան այդ պատասխանի մասին ես կը խօսեմ հետեւեալ անգամ. այժմ կուզէի միայն ընթերցողների ուշադրութիւնը դարձնել Մելեան քահանայի բանակռիւ վարելու ձեւի վրա, նրա պատասխանի տոնի վրա։

Սխալ էր թէ ուղիղ այն միտքը, որ ես պաշտպանում էի «Մշակի» № 79-ում, այդ ուրիշ հարց է, բայց անկասկած է, որ ես իմ յօդուածում չէի աշխատում ստորայնել Մելեան քահանայի արժանապատուութիւնը, չէի ձգտում ոանատակ տալ նրա մարդկային անձնաւորութիւնը։ Ես, ճիշդ է, քննադատում էի Մելեան քահանային, յարձակվում էի նրա բռնած դիրքի վրա, բայց ոչ մի րօպէ չէի մոռանում, որ ես մարդ եմ եւ առաջիս կանգնած է նոյնպիսի մի մարդ։

Ահա ամենախիստ նախադասութիւնները իմ յօդուածում։—(«Հոգեւոր իշխանութիւնը Ախալցխա է ուղարկում) իբր «լիազօր» քննիչ Մեսրոպ քահանայ Մելեանին, որ, ազատամիտ հոգեւորական լինելով, այնուամենայնիւ ամօթ չէ համարում իր համար այդպիսի «լիազորութիւն» ընդունել։ Եւ այնուհետեւ. «լիազորութիւնը» անարդարութիւն է եւ ապօրինութիւն, իսկ Մելեան քահանայի կողմից նաեւ դաւաճանութիւն իր դաւանած գաղափարներին»։

Կարծում եմ, որ ես հարցը դրել էի այնպիսի հողի վրա, որ կարելի էր վիճել, շարունակելով ճանաչել միմեանց արժանապատուութիւնը, շարունակելով յարգել միմեանց մէջ մարդկային անձնաւորութիւնը։ Ես նոյն իսկ պատիւ էի արել Մելեան քահանային ամօթ համարելով նրա համար «լիազորութիւնը», որ բոլորովին բնական բան է համարվում, դիցուք, Բենիկ կամ Տիրայր վարդապետների համար։

Տեսէք այժմ, թէ ինչ լեզու է բանեցնում իմ վերաբերմամբ Մելեան քահանան։

Նա ուզում է ինձ ճնշել իր արհամարհանքի տակ։ Նա ասում է, որ իմ «Արձագանքները» նոյն իսկ չէր արժանացնի ուշադրութեան, եթէ նրանք «Մշակում» տպված չը լինէին, «քանի որ արձագանքները դատարկութեան մէջ արձակած ձայների անդրադարձումներ են» եւ իմ «գանգէց են արձակվում»։ Նա նոյն իսկ թոյլ է տալիս իրան ասել, թէ ես եւ ինձ նման ուրիշ ազատամիտ իրաւաբաններ ախալցխացիներին «ժանտութիւնների ճամբաներ ենք ցոյց տալիս»։

Միանգամայն բարձր համարելով ինձ այդպիսի արհամարհանքից եւ այդպիսի մեղադրանքից եւ ուզելով յարգած լինել մարդկային անձնաւորութիւնը Մելեան քահանայի մէջ նոյն իսկ նրա անարժան տոնով գրած պատասխանից յետոյ, ես կը շարունակեմ բանակռիւը մնալով սկզբունքների հողի վրա։

Տ. Ց.

ԱՆԲԵՐՐԻՈՒԹԻՒՆԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք հետեւեալ նոր նուիրատուութիւնները.

Գորուց—Յովհաննէս Մկրտչեանից 5 ր. նուիրատուներն են՝ Յ. Մկրտչեան, Ս. Գրձելեան, Գ. Խիթարեան, Ն-ից, եւ Մ. Մարուքեան մէկական բուբլի։

Իրեվանի Զավոդից—Սահակ Տէր-Աբրահամեանից 14 ր. նուիրատուներն են՝ Կ. Զաժոյեան, Տէր-Աբրահամեան, Ոմն, Բաղդասարեան 2-ական ր., Զ. Նալբանդեան, Գաբրիէլեան, Ս. Խուդավէրդեան, Ե. Առաքելեան, Ոմն, Ա. Ափոզեան 1-ական ր.։

Բագուից—Զ. Տէր-Գրիգորեանից 24 ր. 50 կ., որ նուիրել են «Ա. Միլով եւ Ա. Թաիրով» ընկերութեան Բիբի-Էյբաթի նաւթահանքի ծառայողները. նուիրատուներն են՝ Յ. Ե. Թայիրեան 5 ր., Ա. Տէրտէրեան, Մ. Էհրամջեան, В. Степашкинъ, Շ. Շիրինեան, Թ. Իվանեան, Թ. Շաքիեան, Фирузъ Абдулъ-Гасанъ-оглы 1-ական ր., Կ. Ափինեան 60 կ., Բ. Հայրապետեան, Բ. Թաթոսեան. Ս. Յովսէփեան, Ա. Քոչարեան, Մ. Յակոբեան, Բ. Աբրահամեան, Յ. Տարսիեան, Ա. Բաղամեան, Գ. Ազատեան, Գ. Աղաջանեան, Ա. Յովհաննէսեան, Վ. Տէր-Զաքարեան, Յ. Խաչատրեան, Յ. Բարամեան, Ս. Գաբրիէլեան, Ա. Սարգսեան, Յ. Խաչատրեան 50-ական կ., Ս. Աւշարեան, Ե. Այվազբէգեան, Ա. Իվանեան, Ա. Այվազեան, Թ. Թաւադեան 30-ական կ., В. Широковъ, Պ. Շիրինեան 25-ական կ., В. Скорняковъ, Г. Матвѣевъ, Յ. Գրիգորեան, Բ. Գրիգորեան, Բ. Աստիեան 20-ական կ., Գ. Նազարէթեան 40 կ.։

Մոսկվայից—Խաչատուր Վարդապետեանից 26 ր. նուիրատուներն են՝ Հայբարձումեան 1 ր. 50 կ., Միքայէլեան 1 ր., Վարդապետեան 55 կ., Աբէլեան 1 ր., Աւետիքեան 1 ր., Արեշեան 30 կ., Ա. Գէորգեան 3 ր., А. Черновъ 1 ր., А. Яблоковъ 1 ր., Եղբ. Մանուէլեան 1 ր., А. Адамовъ, А. Дулгаровъ, Х. Кеворковъ, Е. Тарасовъ 1-ական ր., Драконъ 50 կ., Красильниковъ 1 ր., Тикиджіевъ 50 կ., Т. Мосесовъ 1 ր., Хачатурянъ 1 ր., Дандуровъ 50 կ., Теръ-Арутюнянъ 50 կ., Туманянъ 2 ր., Теръ-Торосовъ 2 ր., Копчакчіанъ 1 ր.. Ազամալեան 1 ր., Ակոբով 15 կ., Սարգիսով 50 կ.։

Ընդամենը 69 բուբլի 50 կ., որ նախկին գումարների հետ միասին անում է 4231 ր. 86 կ. խմբագրատանը մնում է 231 ր. 86 կոպ.։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաթում, ապրիլի 16-ին

«Մշակ»-ի № 79-ում կարդացի պ. Տ. Ց.—ի «Արձագանքները»։ Եւ իրօք՝ նրանք իսկական արձագանքներ էին Ախալցխայի երէցփոխական խնդրի մասին հեղինակի միակողմանի լուսածների ու կարդացածների։

«Արձագանքներին» ես չէի արժանացնի ուշադրութեան, քանի որ արձագանքները դատարկութեան մէջ արձակած ձայների անդրադարձումներ են, բայց ի նկատի ունենալով, որ կան արձագանքներով սնունդ ստացող եւ առաջնորդվող կաթնակերներ եւ մանաւանդ ի նկատի ունենալով, որ ինձ համար միշտ յարգելի «Մշակ»-ի մշտական աշխատակցի գանգից են արձակվում, չեմ կարող կարեւորութիւն չը տալ. ուստի խոնարհաբար խնդրում եմ խմբագրութիւնից, յանուն արդարութեան, տեղ չնորհել սոյն իմ պատասխանին «Մշակ»-ի մէջ։

«Օրինաւոր ճանաչված ծխական ժողովը ընտրել է 12 հաշուեհսներից կազմված մի մասնաժողով։ Հաշուեհսները հաստատել են իրանց պաշտօնում հոգեւոր իշխանութեան կողմից եւ, քննելով երէցփոխի հաշիւները, գտել են բազմաթիւ զեղծումներ», անդրադարձօրէն հնչում է պ. Տ. Ց.։

Բայց եթէ փաստօրէն ապացուցվի, որ այդ ծխական ժողովը մի բոլորովին ապօրինի ժողով է եղել եւ որ նրա վճիռները հաստատվել են չնորհիւ տեղական յաջորդի տուած սխալ վկայութիւնների,—ինչ կասէ այն ժամանակ պ. Տ. Ց.։

Եթէ փաստօրէն ապացուցվի, որ երէցփոխութեան եռամեայ ժամանակամիջոցը տակաւին չը լրացրած երէցփոխը մինչեւ այսօր էլ հաշիւ չէ ներկայացրել ծխական ժողովին, հետեւապէս չը տուած հաշիւը ոչ կարելի է քննել եւ ոչ բազմաթիւ զեղծումներ գտնել, ինչ կասէ այն ժամանակ պ. Տ. Ց.։

Ես իմ «լիազորութեան» մէջ ճանաչել եմ կենտրօնացած այն իրաւունքները, ինչ որ հոգեւոր իշխանութիւնն ունի, իբրեւ վերահսկող ու քննող իշխանութիւն։ Ես ոչ առել եմ ինձ վրա եւ ոչ կը ներքի առնել ու սեպհականացնել ժողովրդի իրաւունքները, որ ամօթ լինէր ինձ եւ դաւաճանութիւն իմ դաւանած գաղափարների։

Ես՝ իբրեւ հոգեւոր իշխանութեան լիազօր՝ քննելով երէցփոխական հաշիւների խնդրին վերաբերեալ պաշտօնական թեր ու դէմ գրութիւնները ու այլ հանգամանքները, գտել եմ, որ այն 12-անձնեայ մասնաժողով ընտրող ընդհանուր ժողովը ապօրինի է եղել իր կազմով եւ իր կայացրած վճիռներով, որ այն 12 անձը բնաւ ս. Փրկիչ եկեղեցու ծխականների եւ մանաւանդ Ախալցխայի հայ ժողովրդի ներկայացուցիչներ չեն, որ նրանք մոլորութեան մէջ են դրել հոգեւոր իշխանութիւնը, որ նրանք չը լուսաբանված հանգամանքները, իբրեւ փաստեր, տարածել են հասարակութեան մէջ, որով եւ կազմել են տուել հասարակական հանգոյցում երէցփոխի 9000 բուբլուց աւելի գողանալու, կլանելու, յափշտակելու նկատմամբ, որ նրանք, չը հասկանալով թէ գիտութեամբ, բարոյապէս մորթել են երէցփոխին, տակաւին նրա յանցաւորութեան պարագաներն օրինաւորապէս չը դատված։

«Մշակ»-ի № 79-ի մէջ պ. Տ. Ց. իր ազատամտութեան տիպարը տուել է Վօլտերի ազատամիտ խոհարարի օրինակի մէջ։ Այս խոհարարը հաւերին մորթելուց առաջ ժողով էր գումարում—ասում է պ. Տ. Ց.—հարցնելու համար, թէ ինչ հիւթով են ուզում տապակվել եւ թոյլ չէր տալիս հարցը չեղելու այն հաւին կամ աքաղաղին, որ կեղնէր յայտնելու, թէ տապակվել չէ ուզում։

Ախալցխայում 12-անձնեայ ազատամիտ հաշուեհսների ձեռքով արդէն մորթված վիճակին է հասել երէցփոխը, եւ հիմի էլ, ազատամիտ խոհարար-իրաւաբանների եւ «արձագանքներ» տուողների խորհրդով, նրանք ուզում են իրանց կողմնակիցների ժողով հրաւիրել հարցնելու, թէ ինչ հիւթով տապակեն երէցփոխին։ Այս ժամին հրապարակ է գալիս լիազօր քննիչը, բաց է անում գործը։ Եւ պ Տ. Ց. բողոքում է այդ լիազորի դէմ. որովհետեւ նա, լիազորը, խանգարում է հոգատար ազատամիտների ծրագիրը, չեղելով հարցը...

Ա՜խ, դուք բաժակի արտաքինը սրբող օրինականներ...

Սազերին ու սազամիտ մարդկանց դուք էք գրգռում, պ. Տ. Ց., ձեր արձագանքներով եւ ձեզ նման ազատամիտ իրաւաբանները նրանով, որ դատախազին ուղղելու բողոքների դռներ, ժանտութիւնների ճամբաներ էք ցոյց տալիս։

Հայաստանը տարին մի անգամ տալիս է ռուսաց կայսրին քսան մսխալ զուտ ոսկի, երեք ձի եւ վեց խոյ։ Հայաստանը ճանաչում է ռուսաց կայսրութիւնը իրան գերութիւնից ազատող եւ պարտաւոր է բարեկամ լինել կայսրի բարեկամների հետ եւ թշնամի՝ նրա թշնամիների հետ. կայսրն էլ փոխադարձաբար այդպէս է վերաբերվում հայերի բարեկամներին եւ թշնամիներին։ Հայաստանը կայսրի պահանջով հարկաւոր ժամանակ պէտք է 6000 օգնական զօրք տայ։ Սահմանվում է դաւանութիւնների փոխադարձ յարգանք ռուսների եւ հայերի կողմից։ Առեւտրական ազատ յարաբերութիւններ են պահպանվում երկու դաշնակից երկիրների մէջ. հայերը Ռուսաստանում եւ ռուսները Հայաստանում ազատ ելումուտք ունեն, առեւտուր են անում, ենթարկվելով երկրի մաքսային օրէնքներին։ Հայաստանը կառավարվում է իր սեփական օրէնքներով։ Քրէական յանցաւորները, որոնք մի երկրից միւսն են փախչում, պիտի դատվեն այն երկրի օրէնքներով, ուր գտնվում են։ 6000 ռուս զինուորների պահպանութեան համար հայերից ստացվելի տուրքը ապահովվում էր Հայաստանի եկամուտների 2/5 մասով, որ գրաւ դրված էր համարվում։ Եթէ Հայաստանի եւ Ռուսաստանի մէջ անհամաձայնութիւններ ծագեն, վէճը ենթարկվում է Գերմանիայի կայսրի միջնորդ դատարանին *)։

*) Թէ երբ և ինչ հանգամանքների մէջ են գրվել այս երկու թղթերը,—շատ դժուար է որոշել։ Պ. Երիցեան («Փորձ» յիշած համարում) ասում է, թէ առաջին թուղթը գրված է 1790 թւականին, մինչդեռ Գիտ քահանայի «Դիւանին» նայելով, նա գրված պիտի լինի 1789-ին։ Աւելի մութ են երկրորդ թղթի հանգամանքները. նա, իբրև թէ, փոխանակված պիտի լինի առաջին թղթի հետ, մինչդեռ ասված է, թէ նա գրված է 1779-ին և ռուսերէնից թարգմանված 1786-ին։ Այսպիսով ահա խառնակութիւն է ստացվում և մենք չենք կարող ասել, թէ ինչ լանակցութիւնների հետեւանք են այդ թղթերը։

Իր տեղում մենք ասացինք, թէ ինչ մեծամեծ յոյսերով էր Յովսէփ արքեպիսկոպոսը 1791 թւականի ձմեռվայ դաժան ցրտերին ճանապարհորդում Պոտեմկինի ետեւից դէպի Պետերբուրգ, ուր պիտի վճռվէին հայերին վերաբերեալ շատ կարեւոր հարցեր։ Տեսանք նոյնպէս, որ նա, մինչեւ ամառը մնալով մայրաքաղաքում, ոչինչ չը կարողացաւ անել եւ Պոտեմկինից հրաման ստացաւ դարձեալ վերադառնալ Եաշ, ուր պիտի նորից շարունակվէին բանակցութիւնները հայկական գործերի մասին։ Բայց այդ տարին վերջինն էր Տաւրիկեան պերճաշուք իշխանի կեանքում։ Մեռաւ Պոտեմկինը. Եկատերինայի արքունիքում նրա տեղ գլուխ բարձրացրեց մի նոր բաղդաւոր ֆավորիտ. դա կոմս Պլատոն Զուբովն էր։ Զուրկ լինելով Պոտեմկինի տաղանդից եւ ընդունակութիւններից, Զուբովը, իր նախորդի փառքը նսեմացնելու համար, կազմեց մի աւելի վիթխարի, աւելի անիրագործելի ծրագիր։ Այդ ծրագրով ռուսաց զօրքը մի յաղթական արշաւանք է գործում մինչեւ Հնդկաստան եւ, թողնելով իր գրաւած տեղերում բերդապահ բաժիններ, վերադառնում է եւ անցնում ասիական Թիւրքիա. միաժամանակ Բալկանեան թերակղզու կողմից Սուվորովը ժառնում է Կ. Պոլսին, իսկ Եկատերինան ծովի կողմից պաշարում է Թիւրքաց մայրաքաղաքը նաւերով։ Հնդկական արշաւանքի համար հրամանատար պիտի նշանակվէր Զուբովի եղբայր Վալերիան Զուբով։

Բայց մինչդեռ թղթի վրա այսպիսի գործեր էին գծագրվում, Անդրկովկասում մի սոսկալի փոթորիկ սկսվեց. Աղա-Մամէդ-խանը, դառնալով Իրանի շահին-շահ, արշաւանք սկսեց դէպի Վրաստան, Հէրակլին պատժելու համար։ Պարսից գահի վրա նստած ահարկու ներքինին չէր կարող մոռանալ, որ Վրաստանի պէս մի կալուածք մտել է Ռուսաստանի իշխանութեան տակ։ Վրայ դժբախտ թագաւորը, զգալով թէ ինչ է նշանակում այդ արշաւանքը, անդադար ռուսներից օգնութիւն էր խնդրում։ Անդրկովկասում մի հատ ռուս զինուոր չը կար, թէեւ Գէօրգիեվսկի դաշնադրութեան համաձայն՝ ռուսները պիտի օգնութեան հասնէին ամեն անգամ, երբ վտանգ էր սպառնում Վրաստանին։ Հիւսիսային Կովկասի հրամանատար Գուդովիչ անտես էր անում Հէրակլի աղաչանքները. իզուր Արղութեանն էլ իր կողմից թախանձում էր նրան զօրք ուղարկել Անդրկովկաս։ Գուդովիչի «հատ գլուխը—գրում էր Արղութեան—չընդունեց խորհուրդները»։ Եւ Աղա-Մամէդ-խանը անարգել մոտեցաւ Թիֆլիսին, քարուքանդ արեց նրան ու 10 հազար ժողովուրդ գերի տարաւ։ Վրաստանը աւերակների կոյտ դարձաւ։ Յովսէփ արքեպիսկոպոսը Հէրակլին գրած իր նամակներում ողբում էր այդ դժբախտութիւնը։

Ռուսաց կառավարութիւնը վճռեց պատժել պարսից շահին այդ բարբարոսութիւնների համար։ Եւ յաջորդ տարին, 1796-ին, Վալերիան Զուբով հրաման ստացաւ Դերբենդի վրայով արշաւանք սկսել դէպի Պարսկաստան։ Յովսէփ արքեպիսկոպոսը նորից մի վերին ատիճանի եռանդուն գործունէութիւն սկսեց։ Նա կազմեց մի մանրամասն զեկուցագիր Հայաստանի եւ նրա սահմանակից երկիրների մասին եւ կցելով դրան իր յօրինած աշխարհագրական քարտէզը, ուղարկեց կոմս Պլատոն Զուբովին։—Միւս կողմից, լսելով որ Հէրակլ թագաւորը այնքան յուսահատվել է, որ մտադիր է նորից հպատակվել Պարսկաստանին, Արղութեանը նամակներ է գրում նրան եւ յորդորում է թողնել այդպիսի մտքերը։ Եւ իրաւ, 1796-ի պարսկական արշաւանքը նորից յոյսեր է զարթեցնում Անդրկովկասի քրիստոնեաների համար։ Այդ արշաւանքի նպատակն էր «վերահաստատել Հէրակլին իր թագաւորութեան մէջ, Ղարաբաղի հայ մելիքներին եւ նրանց հպատակներին միմիայն Ռուսաստանից կախում ունեցողների դրութեան մէջ դնել, գրաւել Արարատեան պատրիարքին, որ շատ զօրեղ ազդեցութիւն ունի ամեն կողմ ցրված հայ ժողովրդի վրա»։

Եկատերինա կայսրուհին, լաւ յիշելով Արղութեանի մատուցած ծառայութիւնները նախկին պատերազմների մէջ, ցանկութիւն յայտնեց, որ պարսկական արշաւանքի մէջ էլ նա մասնակցութիւն ունենայ։ Կոմս Պլատոն Զուբով մի նամակով խնդրեց արքեպիսկոպոսին գնալ Մոզդոկ, տեսնվել իր եղբայր Վալերիանի հետ եւ աջակցել նրան իր խորհուրդներով։ Անխոնջ Արղութեանը, չը նայած իր տկարութեան, կատարեց այդ առաջարկութիւնը. Մոզդոկում Վալերիան Զուբով ընդունեց նրան մեծ պատիւներով, խորհուրդներ էր հարցնում նրանից։ Եւ իրաւ, այդ ժամանակ հազիւ թէ գտնվեր մի ուրիշը, որ նրա պէս լաւ տեղեակ լինէր այն ամենին, ինչ տեղի էր ունենում Պարսկաստանում, Անդրկովկասում եւ Թիւրքիայում։ Ամեն կողմից տեղեկութիւններ էր ստանում նա, եւ եթէ աւելացնենք այս բոլորի վրա այն մեծ ժողովրդականութիւնը, որ նա ունէր քրիստոնեայ ազգաբնակութեան մէջ, այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ նա որքան շատ բաներ կարող էր անել պարսկական արշաւանքի ժամանակ։ Վալերիան Զուբով հէնց այդ պատճառով էլ խնդրում է նրան իր ուղեկիցը լինել արշաւանքի ժամանակ։ Յովսէփը խօսք է տալիս եւ վերադառնում է Աստրախան՝ թեմական գործերը կարգադրելու համար։

(Կը շարունակվի)

լիս նրանց։ Նրանք էլ, ոգեւորված իրանց օրէնքների յօդուածներ ցոյց տուողի համբաւով, թեւները լայն բացած, բոլոր ներովը մէկ գոռում-գոչում են բարձրացնում եւ ոտքները հատատ հողից կտրած՝ քշվում են ու քշվում... Ծիծաղելի է, երբ 12-անձնեայ, մեծ մասամբ, խեղճ, արհեստաւոր հաշւեւտեսները օրէնքի պարզ ու որոշ յօդուածն ըմբռնելու կարողութիւնից զուրկ հաներովը, օրէնքի չասածը, չը նախատեսածներն են դուրս բերում եւ սրանց վրա իրենց գործառնութեան ամրոցները կառուցանում. բայց եթէ վաղը—միւս օրը այն խեղճ մարդիկ հաշիւ ու համար տալու հրաւիրվեն արդարադատութեան առաջ եւ հարկադրված լինեն իրենց մեղքերը քաւելու, այն ժամանակ ինչպէս՝ audiatur et altera pars՝ արհամարհող եւ հեշտահոգի խորհուրդներ տուող իրաւաբանները, այնպէս եւ պ. Տ. Ց., իրենց խղճի վրա բալասան կը քսեն նրանով, որ իրանք ցուցմունքներ են տուել նրանց ասածների համեմատ, որ «արձագանքներ» են տուել նրանց արձակած ձայների համեմատ։ Եւ սա ամօթ չէ։

Խաղաղամիտ պ. Տ. Ց. վերջերում արձակում է սագերի գրգիռը հանգստացնող այս պատգամը. «Ախալցխացիներին մի բան է մնում անել, ծխականների մի նշանաւոր մասի ստորագրութեամբ պահանջ ներկայացնել հոգեւոր իշխանութեան, որ անյապաղ ծխական ժողով գումարեն... Ժողով կազմել իրաւունք ունեցողները իրաւունք ունեն հակելու եւ պահանջելու, որ ժողովները գումարվեն իրանց ժամանակին։ Այո, միայն իրանց ժամանակին, պ. Տ. Ց.։

Ախալցխացիների ոչ թէ նշանաւոր, այլ շատ նշանաւոր մասը գիտէ իր անելիքը. նա ինչպէս անխառն է եղել այդ հաշւեւտեսների ընտրութեան ապօրինի ժողովին, այնպէս էլ կը սպասէ, որ իշխանութիւնը, արդարեւ, ժամանակին հրաւիրէ ընդհանուր ժողով եւ ժողովի անաչառ դատաստանին ներկայացնէ իրանց եկեղեցու տնտեսական հարցերի լուծումն եւ իրանց անունից գործողների դատաստանը։

Մեսրոպ քահանայ Մելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ դիտաւորութիւն կայ Թիֆլիսում հիմնել թատերասէրների ընկերակցութիւն, որը պէտք է կազմակերպէ հայերէն ներկայացումներ տալու գործը։ Ընկերակցութիւնը պէտք է հոգայ ժամանակակից եւ հետաքրքրական բեմերտուար կազմելու, կանոնաւոր դերասանական խումբ պահելու եւ հայ թատրոնական գործին տալու յարատեւ եւ կանոնաւոր կազմակերպութեան բնաւորութիւն։

—

Մեզ հաղորդում են, որ կովկասեան ցուցահանդէսի ժամանակ տեղի ունենալիք հայ-կովկասեան ժողովների համար ներկայումս մշակվում են մանրամասն ծրագիրներ։ Ժողովները հետաքրքրական եւ ուսանելի դարձնելու նպատակով անհրաժեշտութիւն է զգացվում, որ Կովկասի տնտեսական պայմաններին ծանօթ անձինք նպաստեին ժողովներին թէ իրանց զեկուցումներով եւ թէ անձնական գործակցութեամբ մասնակցելով խնդիրների քննութեան եւ մշակութեանը։

—

Կովկասեան բժիշկների 2-րդ համաժողովի կոմիտէտը մեզ խնդրում է տպել հետեւեալը. «Կովկասեան բժիշկների 2-րդ համաժողովը գումարվում է Թիֆլիսում կիրակի, սեպտեմբերի 30-ին եւ կը տեւէ տասը օր։ Զեկուցումների ձեռագիրները ներկայացնելու համար ժամանակամիջոցը նշանակված է սեպտեմբերի 10-ին։ Այն տեսակ տեղեկութիւնների համար պէտք է դիմել կոմիտէտի քարտուղար բժիշկապետ Ա. Ր. Ֆիշերին (Ելիսաւետինսկայա փող., 16)։ Անդամավճարները, 5 բուբլու չափով, տպագրված «Աշխատանքները» ստանալու իրաւունքով, ընդունում է կոմիտէտի գանձապահ բժիշկ Ի. Գ. Մէլիքով (Кадетскій пер., 3)։

—

Կովկասեան հանքային ջրերի վարչութիւնը հրատարակել է մի ուղեցոյց «Кавказскіе курорты» (Կովկասեան կուրորտներ) վերնագրով։ Այդ գիրքը բաժանվելու է ձրիաբար զանազան հիմնարկութիւններին 20,000 օրինակով, նոյնպէս եւ ծախվելու է։

—

Մեզ հաղորդում են, որ Բագուի նահանգում երեւեցած մորեխը ոչնչացնելու նպատակով ուղարկվում է այնտեղ ագրոնում Ա. Սահակեան, որը պէտք է փորձեր անէ, թէ որքան ազդու է չվէյնֆուրտեան կանաչ կոչված միջոցը մորեխ ոչնչացնելու գործում։

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան պ.պ. անդամները այսօր, ապրիլի 27-ին, երեկոյեան ժամի 7½-ին, հրաւիրվում են Նիստի ընկերութեան դահլիճում։ Պարապմունքի առարկաներն են.—1) ընթացիկ գործեր, 2) տնտեսական մասնաժողովի զեկուցումը Թիֆլիսի այգեգործական ուսումնարանի դրութեան մասին եւ 3) ուսումնարանի եկ եւ մուտքի նախահաշիւը 1901 թուականի համար։ Նիստին կարող են ներկայ լինել եւ կողմնակի անձինք։

—

«Կարսъ» լրագիրը հաղորդում է, որ Կարսում, տեղական նահանգապետի նախագահութեամբ, կազմվել է մի ժամանակաւոր մասնաժողով, որի նպատակն է էքսպոնէնտներ գրաւել Թիֆլիսում բացվելիք գիւղատնտեսական եւ արդիւնագործական ցուցահանդէսի համար։

—

«Սուրհանդակ» լրագրի մէջ կարդում ենք. «Հնդկաստանի Կալկաթա քաղաքէն տեղեկութիւն կուտան մեզի թէ՝ տեղւոյն Մարդասիրական Ճեմարանի մրցանակաբաշխութիւնը տեղի ունեցեր է անցեալ փետրվարի վերջերը, Կալկաթայի արքայական թատրոնին մէջ։ Հայ եւ օտարազգի բազմութիւն մը թատրոնը լեցուցեր է։ Պէնկալի անգլիացի ընդհանուր դատախազը ներկայ գտնուելով, անձամբ մրցանակները բաշխեր եւ ապա բանախօսութիւն մը ընելով, մասնաւոր գոհունակութիւն յայտներ է վարժարանին վիճակին նկատմամբ։ Տարւոյս սկիզբները Կալկաթայի մէջ մեռեր է Կարապետ Պաղտասար անուն 62 տարեկան ծերունի մը եւ 4 միլիոն ռուբլի հարստութիւն թողեր է իր զաւակներուն, առանց որ եւ է գումար ձգելու ազգին, հակառակ Հնդկաստանի նման երկրի մը մէջ բնակելուն, հոն ուր կը տակները այնքան առատ են։ Կը պատմեն թէ հանգուցեալը շատ քաջառողջ ըլլալով դեռ երկար տարիներ կրնայ ապրիլ եղեր, բայց իր ագահութեան զոհ գացեր է»։

—

Պարսից կառավարութիւնը, մայրաքաղաքի լրագիրների խօսքով, հաւաձայնութիւն յայտնեց վերացնելու Պարսկաստանում գոյութիւն ունեցող «բախդար» անուանված տուրքը, որը բաւական արգելք էր հանդիսանում ռուսաց ապրանքների տարածման Պարսկաստանում։

—

Ռուսաց լրագրութեան 200-ամեայ գոյութիւնը յաւերժացնելու համար, մտադրութիւն կայ, «Россія» լրագրի խօսքով, մի քանի քաղաքներում հիմնել ազատարաններ զառամեալ եւ չքաւոր գրականագէտների համար, նման Օդէսայի ազատարանին։

—

Տնայնագործների համառուսական ցուցահանդէսի գլխաւոր կոմիսար նշանակված է Կ. Վ. Նիկոլաեվսկի։ Ցուցահանդէսը կը կազմվի Պետերբուրգում, Տաւրիկեան պալատում եւ ձեռք կառնվեն բոլոր միջոցները, որպէս զի ռուսաց տնայնագործական արդիւնաբերութիւնը ներկայացնվի ամենալայն չափերով։ Տնայնագործներին հնարաւորութիւն կը տրվի էժան եւ յարմար կերպով գնալ Պետերբուրգ եւ ապրել այնտեղ առժամանակ։

—

Ռուս գործարանատէրերից մի քանիսը, որոնց գործարաններում պատրաստվում են երկրագործական գործիքներ եւ մեքենաներ, մտադիր են խնդրել ֆինանսների մինիստրին եռապատիկ աւելացնելու այն մաքսը, որ դրված է այժմ Ամերիկայից եւ ուրիշ երկիրներից Ռուսաստան ներմուծվող երկրագործական գործիքների եւ մեքենաների վրա։

—

Պետերբուրգում, բժշկական գլխաւոր խորհրդում, մշակվում է այժմ ֆարմացեվտական կանոնադրութիւնը փոխելու հարցը։

—

Պետերբուրգի կանանց իգական ինստիտուտը մտնել ցանկացողները լատիներէն լեզուից քննութիւններ տուեցին ներկայ տարվայ գարնանը Պետերբուրգի վեցերորդ եւ եօթներորդ գիմնազիաներում։ Խնդիրքներ տուել էին 131 անձինք. քննութիւններին չէին եկել 15 հոգի, կտրվեցին 7 անձինք եւ վկայական ստացան 109 հոգի։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում են. «Զը նայելով, որ սկզբում տ. Սիրանոյշը իր խմբով սառն ընդունելութիւն գտաւ աստրախանցիների կողմից եւ նրա ներկայացումներին շատ քիչ ժողովուրդ էր յաճախում, այժմ, կարծես, աստրախանցիները հակացել են իրանց սխալը եւ սկսել են յաճախել թատրոն՝ տեսնելով տ. Սիրանոյշի գեղեցիկ խաղը։ Տեղական ռուս լրագիրները մեծ գովասանքով են խօսում տ. Սիրանոյշի ներկայացումների մասին»։

—

ՍԱՐԱՏՕՎԻՑ մեզ գրում են. «Առեւտրական ոգին այստեղ եւս, ինչպէս եւ ամեն տեղ, գցել է մի բուռն հայեր։ Սակայն նրանց ներկայութիւնը այստեղ շատ աննկատելի է։ Եկած լինելով Ռուսաստանի ու Պարսկաստանի զանազան քաղաքներից, նրանք իրանց հետ բերել են եւ իրանց յատուկ գաղափարներն ու համոզմունքները, որոնք միշտ արգելք են դառնում ընդհանուր հարցերի շուրջը հաւախմբվելուն։ Տոգորված փառասիրութեան ու առեւտրական մրցման ոգով, նրանք տածում են դէպի միմեանց թշնամական յարաբերութիւններ։ Այստեղ չը կայ նոյն իսկ եկեղեցի կամ աղօթատուն, որտեղ առհասարակ օտարութեան մէջ գտնված հայերը դէպք են ունենում միմեանց հետ տեսնվելու։ Առեւտրական գործերը մեզ էլ նոյնպէս ստիպել են այստեղ բնակվել, եւ ահա մի ամբողջ տարի ապրելով, մենք, ճշմարիտն ասած, չենք էլ երեւակայել, որ այստեղ կարող են լինել աւելի քան հարիւր յիսուն հայեր։ Հայոց քահանան հարկաւոր ժամանակը գալիս է Ցարիցինից, ուր նրա մշտական բնակութեան տեղն է։ Այս անգամ, ինչպէս եւ անցեալ անգամները, Իւզբաշեան քահանան, գալով Ցարիցինից ու բոլորին յայտնելով իր գալուստը, հրաւիրում է նշանակեալ ժամանակին ժողովվել ժամասացութեան տեղը։ Ժամասացութիւնը կատարվում էր պ. Աւագեանի տանը։ Ժամասացութեան ներկայ էին միայն մի քանի քահանիկ մարդիկ ու կանայք։ Ինչին վերագրել այդ, ուր են այստեղի հայերը, ինչն է նրանց բացակայութեան պատճառը—այդ հարցերը հեշտութեամբ են վճռվում, երբ մտածում ենք, որ նրանց եկեղեցի գալը պէտք է գրպանից մի քանի կոպէկ հանել տայ յօգուտ մեզ հովուող քահանայի։ Շահասիրութիւնը, որին հայը պատրաստ է զոհել ազգն ու կրօնը, տիրում է նրա հոգու ու մարմնի վրա»։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Անցեալ կիրակի օրը, ապրիլի 22-ին, հայոց Նորաշէն սուրբ Փրկիչ եկեղեցում նշանակված էր նոր երէցփոխ ընտրելու եւ մի քանի կարեւոր խնդիրներին լուծում տալու համար ծխական ընդհանուր ժողովը։ Բայց ժողովը չը կայացաւ, որովհետեւ Բաթումի եօթ հարիւր ծուխից ներկայ էին միայն 80—90 ծխականներ, այն ինչ կանոնադրութիւնը պահանջում է, որ ժողովին ներկայ լինի առնուազն 140 հոգի։ Ժողովը յետաձգվեց չարաթ օր, ապրիլի 28-ին»։

—

ՂԱՄԱԼՈՒ գիւղից։ (Երեւանի գաւառ) մեզ գրում են. «Ուշիզ երկու ամիս էր, որ մենք անձրեւի երես չէինք տեսել. աշնանացան ցորենի եւ գարու արտերը սկսել էին թառամել։ Այժմ, բարեբախտաբար, անձրեւ եկաւ եւ կանաչները կենդանութիւն ստացան։ Թէեւ անձրեւին հետեւեց եւ բաւական խոշոր կարկուտ, բայց տեւեց 3 րոպէ եւ անվնաս անցաւ։ Հետեւեալ օրը համեմատաբար ցորենի եւ գարու գինը իջաւ մի քանի բուբլով, այնպէս որ այժմ մեզանում ցորենի խալվարը (30 պուդը) 18—22 բուբլի է, իսկ գարունը 14—15 բուբլի»։

—

Ղազախի գաւառի ՎԵՐԻՆ-ԱՂԴԱՆ գիւղից մեզ խնդրում են տպել հետեւեալը. «Ստացանք տ. Ե. Սարգսեանից 80 ր., որը «իր մայր Մարգարիտ Իւզբաշեանցի օգնութեամբ ժողովել է մի խումբ տիկիններից», մեր եկեղեցու տանիքի շինութեան համար։—Ի դիմաց հասարակութեան յայտնում ենք անկեղծ շնորհակալութիւն յարգելի տիկիններին»։

—

ԱԽՏԻՐԿԱՑԻՑ մեզ գրում են. «Անցեալ եբաշտ տարվան յաջորդեց ցուրտ եւ անձրեւային տարին։ Ցուրտ եղանակների պատճառով ծառերը դեռ բոլորովին չեն բացվել։ Ցանքսերը արդէն վերջացել են եւ առատ հունձ են խոստանում, եթէ անձրեւները կը շարունակեն տեղալ, ինչպէս այժմ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Մակեդոնական կոմիտէտի նոր ընտրված նախագահ պրոֆէսոր Միխայլովսկի Սոֆիայում, «Славянская бесѣда» կոչված ժողովարանի դահլիճում, որ ամբողջովին լիքն էր հասարակութեամբ, կարդաց մի դասախօսութիւն «բոլգարօ-ռումինական ընդհարման» մասին եւ իր բերած փաստերով,—ինչպէս վկայում են Սոֆիայի լրագիրները,—մեծ տպաւորութիւն գործեց ամենքի վրա։ Միխայլովսկու կարծիքով, ռումինացիների թշնամութիւնը դէպի բոլգարները ունի իր հիմնական պատճառները, առաջացած, ի միջի այլ պատճառների, եւ ազգային—քաղաքական հանգամանքներից։ Ռումինական թագաւորը գերմանական ծագումն ունի եւ Ռումինիայում տիրող դասակարգը, որ բաղկացած է օտարազգիներից, հակառակ է հարաւային սլաւօնական ազգերի, մանաւանդ բոլգարների, ուժեղացմանը եւ ամեն կերպ աշխատում է արգելք հանդիսանալ հարաւային եւ հիւսիսային սլաւօնների փոխադարձ մերձեցմանը։ Համառօտակի նկարագրելով Ռումինիայի եւ Բոլգարիայի անցեալ պատմութիւնը՝ դասախօսը մանրամասն քննեց Ռումինիայի այժմեան սոցիալական—տնտեսական դրութիւնը, առանձին ուշադրութիւն դարձնելով ռումինական թագաւորութեան արտաքին քաղաքականութեան վրա, որ ղեկավարվում է աւստրօ-գերմանական դիւանագէտների միջոցով։ Այն հատուածները, որ դասախօսը քաղում էր Բիսմարկի եւ Անդրաշիի յիշատակարաններից եւ թղթակցութիւններից, նոյնպէս եւ ռումինական այժմեան թագաւորի կենսագրութիւնը մեծ յուզումն առաջ բերին ներկայ եղող հասարակութեան մէջ։ Պրոֆէսոր Միխայլովսկու ասելով՝ վերջին ընդհարումը Բոլգարիայի եւ Ռումինիայի մէջ արդիւնք էր աւստրօ-գերմանական դիւանագէտների գործունէութեան, որոնք ձգտում են ամեն միջոցներով թուլացնել սլաւօնների զարդացումն եւ առաջադիմութիւնը։

—«Times» լրագրի թղթակիցը չինական կայսրի վերջին հրովարտակի մասին բարենորոգումների վերաբերմամբ գրում է Շանգհայից, թէ հրովարտակի բովանդակութիւնը թէպէտեւ բոլորովին զոհացուցիչ չէ, բայց եւ այնպէս նա իսպառ զուրկ չէ նշանակութիւնից։ Կայսրը այդ գրութեան մէջ յիշում է, որ իբրեւ պատասխան նրա առաջին հրաւէրին՝ մշակելու բարենորոգումների ծրագիրներ՝ ուղարկվեցին նրան այնքան բազմաթիւ առաջարկութիւններ եւ այդ բոլոր առաջարկութիւններն ու բարենորոգումների նախագծերը այնքան տարբեր էին միմեանցից, որ նա վճռեց նշանակել մի նոր մասնաժողով, որ մանրամասնաբար քննէ այդ ծրագիրներն եւ զեկուցումները։ Պարզ է, որ չինական արքունիքը շատ դժգոհ է մնացել ծրագիրների առատութիւնից, որ ապացուցանում է, թէ չինական ատիճանաւորներն եւս բարենորոգումների կողմնակից են, ուստի եւ կայսրը այս անգամ էլ, ինչպէս եւ միշտ, դիմում է խուսափողական քաղաքականութեան։ Բացի դրանից ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ կայսրը վերջնական վճիռը թողնում է այրի կայսրուհու կամքին։ Ապագայ Չինաստանի համար շատ նշանաւոր է, որ այրի կայսրուհու ազդեցութիւնն եւ իշխանութիւնը ամենեին չեն նուազում, այլ ընդհակառակը հետզհետէ աճում են։

—Ֆրանսիական նախկին մինիստր-նախագահ Մէլինը, որ հանրապետական—առաջադիմական կուսակցութեան պարագլուխն է այժմ, մօտ օրերում իր ընտրողների առաջ, Ռէմիրէժոնում, արտասանեց մի ընդարձակ քաղաքական ճառ, որով սկիզբն դրեց առաջիկայ պատգամաւորական ընտրութիւնների պայքարին։ Նրա ամբողջ ճառը մի մեղադրական ակտ էր Վալդէկ-Ռուսսոյի մինիստրութեան դէմ։ Ֆրանսիայում այժմ, Մէլինի ասելով, ամեն ինչ վատ է գընում, որովհետեւ ներկայ մինիստրութիւնը չէ կանգնած իր կոչման բարձրութեան վրա։ Ռէմիրէժոնում ի պատիւ Մէլինի տուած բանկէտին մասնակցողներից մէկը, Բամբօ, աւելի եւս առաջ գնաց իր մեղադրանքների մէջ Վալդէկի մինիստրութեան դէմ եւ յայտնեց, որ Ֆրանսիան այժմ արագութեամբ քայլում է դէպի անդունդը։ Ֆրանսիական լրագիրները հեգնութեամբ նկատում են այս առիթով, թէ Բամբօ իր ճառի մէջ պէտք է աւելացներ, որ Ֆրանսիան անդունդից կարող է փրկել միայն Մէլին...

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ներկայ տարվայ մայիսին Նիւ-Եօրկում կը գումարվի կօնդրէս տուբէրկուլօզի դէմ կռուելու միջոցներ մշակելու համար ոչ միայն Նոր, այլ և Հին Աշխարհում։ Մշակված միջոցները համաշխարհային բնաւորութիւն կը կրեն, եւ այդ պատճառով կօնդրէսի մասնաժողովը հրաւիրվում է այն անձանց, որոնք կարող են օգտակար լինել, եթէ ոչ իրանց անձնական մասնակցութեամբ, գոնէ ըէֆէրատներ եւ այդ հարցի վերաբերեալ տեղեկութիւններ ուղարկելով։ Որովհետեւ կօնդրէսը կը մշակէ և այնպիսի միջոցներ, որոնց կեանքի մէջ մտցնելը և գործադրելը հնարաւոր կը լինի օրէնսդրական ճանապարհով, այդ պատճառով կօնդրէսին մասնակցելու հրաւիրվում են նոյնպէս իրաւաբաններ, հրապարակախօսներ, կառավարական պաշտօնեաներ և ամեն դասնութեան հոգեւորականներ։ Պէտք է դիմել հետեւեալ հասցէով. New-York, Great Central Palace of the City, American Congress of Tuberculosis.

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
25 ապրիլի

ՊԷԿԻՆ։ Դեսպանները վճռեցին դիմել Չինաստանին միացեալ յայտագրով, որի մէջ կը հաղորդեն, թէ բոլոր պահանջները Չինաստանից 450 միլիոն տայել են եւ կը հարցնեն, թէ ինչպէս է Չինաստանը մտածում վճարել։

ԿԻԼ։ Ռուսական զրահակիր «Герцогъ Эдинбургскій» չրջանաւը ճանապարհ ընկաւ դէպի Կրօնշտատ։

ՍՕՖԻԱ։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստր Սլավէյկով յանկարծակի վախճանվեց. նախկին մինիստր Գրէկով ծանր հիւանդացաւ։

ՊԷԿԻՆ։ Չինաստանի պատասխանը դեսպանների միացեալ յայտագրին սպասվում է չաբաթվայ վերջում։ Չինաստանը, երեւի, կառաջարկէ վճարել պահանջները՝ աւելացնելով մաքսերը։ Ենթադրում են, որ պետութիւնները, իբրեւ փոխարինութիւն Չինաստանի կողմից արված զիջումներին, կը համաձայնվեն այնպիսի միջոցների, ինչպէս լիկինի իսպառ վերացումը, ոսկու ներմուծման մաքսի սահմանումը, իսկական ազատ նաւարկութիւն ներքին ջրերի վրա եւ արգելքների վերացումն նաւարկութեան համար Տակուի եւ Վուզունի մէջ։ Դեսպաններից մի քանիսը հրաժարվում են պահանջել, որ Չինաստանը բանայ ամբողջ երկիրը առեւտրի համար, համարելով, որ Չինաստանի պատասխանատուութիւնը շատ մեծ կը լինի եւ որ կառավարական այժմեան սիստեմի ժամանակ չէ կարելի երաշխաւոր լինել օտարերկրացիների ապահովութեան համար երկրի միջին մասերում։

ԲԱՐՑԵԼՕՆԱ։ Կատալոնացիները մի ժողովում բողոքեցին սպանական միութեան դէմ. տեղի ունեցան անկարգութիւններ։

ՄԱԴՐԻԴ։ Այսօր կը յայտարարվի սահմանադրական երաշխաւորութիւնների դադարումն։

Կ. ՊՕԼԻՍ։ Թիւրքական պօստի վարչութիւնը յայտնեց, թէ այսուհետեւ օտարերկրեայ պօստատներին ուղղված հակերը կը բացվեն թիւրքական իշխանութիւնների ձեռքով եւ ապա կը յանձնվեն տէրերին։ Այս յայտարարութեան պատճառով լուրջ տարաձայնութիւններ ծագեցին թիւրք կառավարութեան եւ դեսպանների մէջ. այժմ պօստատան վարչութիւնը յայտնեց, թէ հակերը առաջվայ նման կը յանձնվեն պօստատներին, բայց չի թոյլ տրվի, որ այդ պօստատներից հակեր ուղարկվեն Եւրոպա։

ՎԻԵՆՆԱ։ Պատգամաւորների ժողովը ընդունեց այն առաջարկութիւնը, որով էրցհերցոգ Ֆրանց-Ֆէրդինանդ հրաժարվում է իր ժառանգութիւնից կոմսուհի Խոտէկի հետ ծնված որդոց գահաժառանգութեան իրաւունքից։

ՄՕՍԿՎԱ։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը եկաւ այստեղ եւ իսկոյն ընդունեց շրջանի հոգաբարձուին, որի հետ երկար խօսակցութիւն ունեցաւ։ Ցերեկվայ ժամի 3-ին մինիստրը այցելեց համալսարան, ուր հաւաքվել էին բոլոր պրոֆէսորները, ըէկտորը եւ հոգաբարձուն։ Համալսարանի դրան մօտ, մտնելիս եւ դուրս գալիս, մինիստրին դիմաւորեցին ուսանողները։ Դիմելով նրանց՝ մինիստրը ասաց, թէ նրանց համարում է պետութեան նեցուկն եւ յոյսը եւ խորհուրդ է տալիս սովորել։ Ուսանողները խնդրեցին մինիստրին իրանց պատժված ընկերների համար. մինիստրը պատասխանեց, թէ Թագաւոր Կայսրի սիրտը աւելի գթառատ է, քան նրանց բոլորի սրտերը միասին վերցրած, բայց թէ անհրաժեշտ է, որ ուսանողները իրանց վարքով ժառայնել տան յանցանքը։

26 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հեծեալների 10-րորդ դիվիզիայի հրամանատար գեներալ-լէյտէնանտ բարոն Ֆօն—Շտակէլբէրգ նշանակվում է սիբիրական երկրորդ կօրպուսի հրամանատար։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Տրանսվաալի հիւսիսային եւ արեւելեան կողմերում տեղի են ունենում մեծ ճակատամարտներ. բօէրները ծանր կորուստներ են կրում. սպանված են 40, վիրաւորված են 200 եւ անձնատուր են եղել 160 հոգի. գրաւված են բազմաթիւ թղթեր, բանակային տոմսեր, 220 սայլ եւ 9,000 ձի։ Բօէրական զօրքը, լրագրական տեղեկութիւններին նայելով, կազմալուծվում է։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Այն զօրաբաժինը, որ, անցնելով Բօսնեկալի եւ Տօտէսբուրգի շրջաններից, Միդդլբուրգից եկաւ Բէլֆաստ, ճանապարհին ունեցել է միայն մի լուրջ կռիւ, երբ նա հալածում էր բօէրներին այն տեղերից, ուր նրանք թագցրել էին իրանց ընտանիքները։ Բոտա եւ Վիլիէմ միացրին իրանց զօրաբաժինները. նրանք գտնվում են Կարօլինայում։

ՀՌՕՄ։ Ցանարդէլի յայտնեց սենատում, թէ կը դիմէ պարլամէնտին հաստատելու Հաագայի կոնֆերենցիայի այն որոշումները, որոնք չեն համապատասխանում Իտալիայում այժմ գոյութիւն ունեցող օրէնքներին։

ՊԵԿԻՆ։ Այն հանդէսում, որ կազմել էր գեներալ Գէզլի ի պատիւ ամերիկական օֆիցէրների, Զաֆֆի արտասանեց մի ճառ, որի մէջ ասաց. «Թող թագաւորները եւ մինիստր-քաղաքագէտները ասեն, ինչ որ կամենում են, բայց ես կարող եմ երաշխաւորել, որ ամերիկացիները եւ անգլիացիները երբէք չեն հանդիպի միմեանց պատերազմի դաշտում երես առ երես։ Միջազգային քաղաքականութիւնը կարող է ձգտել այն բանին, որ զանց առնվեն միջազգային յարաբերութիւնները, բայց եթէ հանգամանքները ստիպեն մեզ ընտրութիւն անել, մենք, ի հարկէ, անգլիացիների կողմը կը բռնենք»։

Կ. ՊՕԼԻՍ։ Դեսպանները բողոքեցին բռնի գործողութիւնների դէմ պօստով ուղարկվող ծանրութիւնների վերաբերմամբ. մտադրութիւն կայ դիմել հարկադրական միջոցների, եթէ չուտով բաւարարութիւն չը ստացվի։

ՍՕՖԻԱ։ Գրէկով վախճանվեց։

ԻՕԿՕՀԱՄԱ։ Ինչպէս հաղորդում են Սէուլից, կայսրը հրաժարվում է տալ իր համաձայնութիւնը փոխառութիւն անելու Իւնանի սինդիկատից. այս բանի պատճառով գաղտնի խորհրդի նախագահը հրաժարվեց պաշտօնից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված են ժողովրդական լուսաւորութեան մինիստրի շրջաբերականները. առաջինը՝ հին լեզուների զրաւոր քննութիւններից ազատելու վերաբերմամբ այն կողմնակի անձերին, որոնք ենթարկվում են քննութեան այդ լեզուներից։ Երկրորդը. «Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ եղած այն առատ նիւթերը, որոնք վերաբերում են միջնակարգ դպրոցին, բոլորովին հատուցիչ կերպով վկայում են, ի միջի այլոց, եւ այն մասին, որ մեր գիմնազիաները յաճախ տալիս են բարձրագոյն դպրոցներին այնպիսի ունկնդիրներ, որոնք չատ քիչ տեղեկութիւններ ունեն այն առարկաներից, որոնք ուսումնասիրվում են գիմնազիաներում։ Այս բանի մէջ առանձին ուշադրութիւն է գրաւում իր վրա ռուսաց լեզուն, եթէ ի նկատ առնելու լինենք այն հարաբաձնօթ փաստը, որ մինչեւ անգամ հասունութեան քննութիւնների ժամանակ գրված շարադրութիւնների մէջ յաճախ պատահում են աշխատանքներ, որոնք ոչ միայն թոյլ են իրանց ներքին բովանդակութեան, այլ եւ քերականական եւ ոճի սխալների կողմից եւ որոնք ցոյց են տալիս քննվողների անծանօթութիւնը քերականութեան սկզբնական կանոնների եւ ոճաբանութեան հիմնական սկզբունքների հետ։ Այս տխուր երեւոյթի պատճառներից մէկն էլ այն անվիճելի փաստն է, որ չատ գիմնազիաներում հասունութեան քննութիւնները կատարվում են չափազանց ներողամտաբար, չատ մեծ զիջումներով, իսկ այս հանգամանքը իր կողմից չատ աննըպաստ ազդեցութիւն է գործում ուսուցման գործի ամբողջ ընթացքի վրա, սովորեցնելով աշակերտներին վայր ի վերոյ վերաբերվել նրանց աւանդված առարկաների իւրացմանը եւ յոյսերը դնել զիջողութիւնների վրա քննութիւնների ժամանակ։ Այս պատճառով պարաք եմ համարում խնամարհաբար խնդրել ձեր գերազանցութիւնից դարձնել ձեզ յանձնված ուսումնական շրջանի գիմնազիաների վերատեսուչների ուշադրութիւնը այն բանի վրա, որ քննութիւնները պէտք է կատարվեն կարեւոր լրջութեամբ, առանց աւելորդ զիջումների, որոնք կորստաբեր ազդեցութիւն են գործում երիտասարդների ապագայ վիճակի վրա եւ որ, չը ծանրաբեռնելով քննվողներին հասունութեան քննութիւնների ժամանակ մանր եւ երկրորդական մանրամասնութիւնների պահանջներով, անհրաժեշտ է հաստատանալ, թէ գիտէն արդեօք նրանք իւրաքանչիւր առարկայի ամենաէականն եւ կարեւորը, ինչպէս այդ ցոյց է տուած եւ այժմ գործող կանոններով քննութիւնների ժամին։ Առանձին ուշադրութիւն մանաւանդ պէտք է դարձնել նրանց տեղեկութիւնների վրա մայրենի լեզուի մէջ, ի նկատի ունենալով, որ վերոյիշեալ պակասութիւնները չը պէտք է լինեն այն երիտասարդների շարադրութիւններում, որոնք ճանաչվում են հասուն եւ նախապատրաստված իւրացնելու գիտութիւնները բարձրագոյն դպրոցներում»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ

Վերադառնալով արտասահմանից՝ ընդունում է բերանի եւ ատամների հիւանդութիւններ ունեցողներին։ Շինում է արուեստական ատամներ, քիթ, քիմք (обтураторъ) եւ վերին ու ստորին անդամատուած ծնօտների պրօթէզներ (протезы)։

Առաւօտեան 8—2 ժամը
Երեկոյեան 5—8 »

Հասցէն՝ Пушкинская ул. № 16, надъ магазиномъ Шадинова. 7—25

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Երկուշաբթի, ապրիլի 30-ին,

յայտնի բեմական գրուածք «ՊԷՊՕ»-ի 30-ամեայ տարեդարձի առիթով (առաջին անգամ ներկայացրել են 1871 թուի ապրիլի 30-ին)

Դ. ՉՄՇԿԵԱՆԸ

կը ներկայացնէ

ՊԷՊՕ

Կօմ. 3 գործ. հեղ. Գ. Սունդուկեանցի։

Մասնակցում են՝ տիկ. Սաթ.-Զմշկեան, օր. Վարդուհի, օր. Զմշկեան, պ.պ. Զմշկեան, Տէր-Դաւթեան, Մանդինեան, Միրզաեան, Մամիկոնեան եւ Միրզայեան։

II

ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Գ. Սունդուկեանցի գրուածքներից։

III

ԱՊՕԹԷՕԶ

Սկիզբն է ճիշտ ժամը 8-ին։ Տոմսակները թատրօնի կասայում։ 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ

ԶԱԽԱՐԻԷԳԵԱՆ

վերադառնալով արտասահմանից, վերանորոգում է հիւանդների ընդունելութիւնը մայիսի սկզբից Կովկասեան հանքային ջրերում (Պեատիգօրսկ)։ 4—10

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

Յ. Յ. ՂՈԿԻԷԼԵԱՆԻ

Ընդունում է՝ վէներական, ախտական, մորթու եւ ներքին հիւանդութիւն ունեցողներին։

Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5— 8 ժամը.

Միխայլովսկայա եւ Նէմեցկայա փողոցների անկիւն, տուն Սլիվիցկու, մուտքը Նէմեցկայա փողոցից։ 19—25

Մամուլի տակ է

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

ԳՐՉԻ ՀԱՆԱՔՆԵՐ

Նոր աշխատութիւնը։

Գրքի երեսը զարդարված կը լինի նկարիչ Վ. Սուրէնեանցի նկարով։

ԳԻՆՆ Է 50 ԿՕՊԷԿ

Դիմել հեղինակին՝ Москва, Садовая—Каретная. меб. ком. Носальскаго. Ал. Цатуріану. 3—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ դները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սբևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։ 100—100

Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում

Ծախվում են հետեւեալ հայերէն նոր գրքերը՝

Աբովեան, Խաչատուր, երկասիրութիւնների ժողովածու (Վէրք Հայաստանի եւ ուրիշները) հեղինակի պատկերով, Մոսկվա, 1 ր.։
Բուդուղեան Ա. բժ., Առողջ հոգին առողջ մարմնի մէջ—10 կ., Գեղձախտ (Զօլոտուխա)—10 կ., Ինչ է անառակութիւնը—5 կ., Մեր նեարդերը—10 կ., Սիֆիլիս—10 կ., Վէներական ախտեր—5 կ.։
Մանդակունի Գր. քահ., Ոսկի բարեկամ Էֆիմէրտէ—Երազագիրք, բ. տպ., Թիֆլ. 2 ր. 70 կ.։
Պօտապենկօ Ի., Ֆարաջաւոր ուսանողը, Թիֆլ. 1900 թ. 15 կ.։
Սունդուկեանց Գ., Գիշերուան սարը խէր է, բ. տպ. ուղղած, Թիֆլ. 1901 թ. 30 կ.։
» Օսկան Պետրովիչը էն կինքումը բ. տպ. փոփոխած Թիֆլ. 1901 թ. 10 կ.։
» Ամուսիններ՝ կոմեդիա հինգ արարուածով, երկր. տպ. ուղղած գ. 1 ր.։
Տէր-Ասատրեան, Հայ գործիչների գեղարուեստական ալբոմ, 32 պատկեր, Թիֆլ. 3 ր.
Ռաֆֆի, Զահրումար—2 ր., Կայծեր ա. հատ. 2 ր., Կայէնի կտակը—1 ր. 20 կ. Տաճկահայք—50 կ., Մինն այսպէս, միւսն այնպէս—1 ր.։
Ցարութիւնեանց Իս., Ծաղկոց (մանկական պարտէզ) Թիֆլ. 1901 թ. 10 կ.։

Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (ու. չ.) 5—6

!!! ՎԵՐՋԻՆ ՀՐԱՇՔ !!!

Ս. Մ. ԱՆԱՆՈՎԻ՝ ՄՕՍԿՎԱՅԻ ԳԻԼԶԱՆԵՐ

Շինվում են ֆրանսիական ամենալաւ «լը Դէրնիէր Կարտուշ» թղթից

Ս. Մ. Անանովի՝ Մոսկվայի գիլզանները բարակ են, գեղեցիկ, մոխիր չեն թողնում եւ ոչնչացնում են նիկոտինի ներգործութիւնը։

Պահանջեցէք ամեն տեղ Ս. Մ. Անանովի՝ Մոսկվայի գիլզանները«

Գործարանը—ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, բաժանմունքը—ՐՕՍՏՕՎՈՒՄ ԴՕՆԻ ՎՐԱ։ 7—10

Կօնֆէկտի եւ շօկօլադի գործարան

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ"

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Յայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են շաքարեղէնների ամեն տեսակ արտադրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մատչելի գներով մրցում են Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ։

Պատրաստում ենք՝ կարամել մրգեղէնից (фруктовая карамель), կարամէլ լցված (съ начинкою), մարմէլադ (пастила), զէֆիր (зефиръ), դրաժէ (драже), քիրվա-չաքար (պաղ-չաքար, леденецъ),

Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մայրաքաղաքից հրաւիրված յայտնի վարպետի հսկողութեան տակ։

Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշդութեամբ։

Պրէյս-կուրանտը ուղարկվում է ցանկացողներին ձրի։

Պատուէրների համար դիմել՝ Тифлисъ, Нахаловка, Павловская улица, собственный домъ, № 12.

Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագազիններում—Գ. Բայեանդուբեանի, Գ. Ս. Տէր-Սիմոնեանի, Զ. Ի. Սուլխանեանի, Զ. Պ. Պօպովի, Եղբ. Ս. Ի. Մ. Աբրահամովների, Հաջի-Ռահմանովի պարսկական մագազինում, Պետրոի իտալական մագազինում եւ այլն։ Տելեֆոն № 362։ 14—100

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Апрѣля 1901 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27